# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՌԻ-ՓԱՄԲԱԿԻ[1] ԳԱՎԱՌՈՒՄ (1921—1925 թթ.)

Գ. Մ. ԱՅՎԱԶՅԱՆ

Սովետական իշխանության հաստատման առաջին օրերից Հայաստանի կոմկուսի Կենտկոմը եռանդուն գործունեություն ծավալեց կուսակցական բջիջների ստեղծման, նրանց ամրապնդման, գավառային կուսակցական կոմիտեներ կազմակերպելու ուղղությամբ։

Հանրապետությունում առաջինների թվում, 1920 թ. դեկտեմբերին[2] կազմակերպվեց ՀԿ(բ)Կ Ղարաքիլիսայի դավկոմը։ «Զեզոք գոտում» դինված ապստամբության հաղթանակից հետո, 1921 թ. մարտի սկզբներին ստեղծվեց ՀԿ(բ)Կ Լոռու գավառային կոմիտեն[3]։

Գավառային կոմիտեները առաջին օրերից հսկայական աշխատանք կատարեցին կուսակցական բջիջների կազմակերպման ուղղությամբ։ Գյուղերում, ձեռնարկություններում, հիմնարկություններում մեկը մյուսի հետևից ստեղծվում էին կուսակցական կազմակերպություններ։ Կարևոր խնդիրներից մեկն էլ կոմունիստների հաշվառումն և վերացուցակագրությունն էր։ Դա կուսակցական շարքերի ամրապնդմանը նպաստող մի միջոցառում էր, որի շնորհիվ կճշտվեր կոմունիստների ընդհանուր թիվը ողջ կազմակերպությունում, կկատարվեր նրանց ուժերի նպատակասլաց վերաբաշխում։ Այս ամենը հիմք էր ստեղծում գավառային կուսակցական հիմնադիր կոնֆերանսների հրավիրման համար։ ՀԿ(բ)Կ Ղարաքիլիսայի գավառային կուսակցական հիմնադիր կոնֆերանսը տեղի ունեցավ 1921 թ. փետրվարին, իսկ Լոռիում՝ 1921 թ. օգոստոսին[4]։ Վերոհիշյալ կոնֆերանսներով ավարտվում է Ղարաքիլիսայի և Լոռու գավառային կուսակցական կազմակերպությունների կազմակերպչական ձևավորման շրջանը։ Դա կարևոր իրադարձություն էր նշված գավառների կուսակցական կազմակերպությունների կյանքում։ Կուսակցական շինարարությունը թևակոխում է իր երկրորդ շրջանը։ Անհրաժեշտ է դառնում կազմակերպչորեն ամրապնդել սկզբնական կազմակերպությունները, բարձրացնել նրանց մարտունակությունը։ Պատահական չէր, որ վերականգնման տարիներին գավառային կազմակերպության աշխատանքներում կարևոր տեղ էին գրավում կուսակցական շինարարության այնպիսի հարցեր, ինչպես կուսակցական շարքերի աճը, նրա սոցիալական կազմի բարելավումը, կոմունիստների քաղաքական ու կուլտուրական մակարդակի բարձրացումը։

---

1 Լոռի-Փամբակի գավառը կազմակերպվեց 1923 թ. Լոռու և Ղարաքիլիսայի գավառների միավորման հիման վրա։ Ստեղծվեցին նաև կուսակցական, սովետական և կոմերիտական միացյալ կազմակերպություններ։

2 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, ց. 2, գ. 1, թ. 2։

3 Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 161, թ. 5։

4 Հայաստանում սկսված քաղաքացիական կռիվների պատճառով Լոռու գավառային կուսակցական հիմնադիր կոնֆերանսի հրավիրումն ուշացավ։

Անհրաժեշտ էր նախ և առաջ կազմակերպությունները մաքրել խորթ տարրերից, ժուլիկներից, բյուրոկրատներից, անազնիվներից, անկայուն կոմունիստներից և այն մենշևիկներից, որոնք, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, «ֆասադը» վերաներկել էին, բայց հոգով մնացել էին մենշևիկ[5]։

Լոռի-Փամբակում զտումը անցկացվեց 1921 թ. վերջին և 1922 թ. սկզբներին։ Ղարաքիլիսայի գավառում զտման և ստուգման ենթարկվեցին կուսակցության 91 անդամ և 102 թեկնածու, Լոռու գավառում՝ 497 անդամ, 534 թեկնածու։ Զտման հետևանքով կուսակցությունից վտարվեցին և դուրս մնացին Ղարաքիլիսայի գավառում՝ կազմակերպության ընդհանուր կազմի 40,4 տոկոսը (կուսակցության անդամների 23 տոկոսը և թեկնածուների 55,8 տոկոսը)։ Լոռու գավառում՝ ընդհանուր կազմի 27,1 տոկոսը (կուսակցության անդամների 24,5 տոկոսը, թեկնածուների 27,5 տոկոսը)[6]։ Զտումից հետո Ղարաքիլիսայի և Լոռու գավառներում միասին կուսակցության շարքերում մնացին 435 անդամ և 431 թեկնածու։ Զտումը բարելավեց կուսակցական կազմակերպությունների սոցիալական կազմը, բարձրացրեց կուսակցության հեղինակությունը, ուժեղացրեց նրա ազդեցությունը մասսաների վրա։

Լոռու գավառի կուսակցական երկրորդ կոնֆերանսում զտման արդյունքների մասին զեկուցումներով հանդես եկան Հայկազ Կոստանյանը և Գավկոմի քարտուղար Քեռին (Կարապետ Կարապետյան)։ Կոնֆերանսը նշեց, որ զտումը գավառում անցել է բավարար, թեև եղել են առանձին սխալներ։

Կուսակցության շարքերի զտումը ցույց տվեց, որ կոմունիստների քաղաքական պատրաստականության աստիճանը դեռևս չէր համապատասխանում նոր խնդիրներին։ Ժողովրդական տնտեսության վերականգնումը, ինչպես հայտնի է, տեղի էր ունենում ՆԷՊ-ի պայմաններում։ Բուրժուական և մանրբուրժուական զազափարախոսությունը թափանցում էր նաև կոմունիստների շրջանը։ Այստեղից էլ ծնվում է մարքսիզմ-լենինիզմի ավելի խորը ուսումնասիրելու անհրաժեշտությունը։

Կուսակցական լուսավորության համար սկզբնական շրջանում լայնորեն օգտագործվում էին կուսակցական ժողովները։ Բջիջների նիստերում կոմունիստները ուսումնասիրում էին կուսակցության ծրագիրը և կանոնադրությունը, ծանոթանում մարքսիզմ-լենինիզմի հիմունքներին։

Չնայած մասսայական լինելուն, քաղաքական ուսուցման նման ձևը արդյունավետ չէր, որովհետև կոմունիստների կրթական և քաղաքական պատրաստականության մակարդակը տարբեր էր և որոշակի դժվարություններ էր ստեղծում աշխատանքի այդ բնագավառում։ Ահա թե ինչու 1922 թ. վերջերին կոմունիստների քաղաքական ուսուցման հիմնական ձևերից մեկը դարձավ քաղզրագիտության դպրոցը։

ՌԿ(բ)Կ XII և XIII համագումարները գյուղական կոմունիստների քաղաքական անդրագիտության վերացումը համարեցին կուսակցության առաջնահերթ խնդիրներից մեկը։ Խորհուրդ տրվեց լայնորեն կիրառել շրջիկ դպրոցների սիստեմը, որի «կենսունակությունը և նպատակահարմարությունը ապացուցված էր մի շարք տեղերի փորձով»[8]։ Շրջիկ դպրոցների անհրաժեշտությունը

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 26։
6 «Խորհրդային Հայաստան», № 18, 24 հունվարի, 1922։
7 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, ց. 2, դ. 68, թ. 3։
8 «ՍՄԿՊ-ն բանաձևերում...», երկրորդ մաս, էջ 89։

պայմանավորված էր նրանով, որ այդ տարիներին պակասում էին համապատասխան փորձ ու դիտելիքներ ունեցող պրոպագանդիստական կադրեր, հնարավոր չէր բոլոր գյուղերում կազմակերպել դպրոցներ։ Շրջիկ դպրոցներում ընդգրկվում էին մոտակա գյուղերի կոմունիստները։ Հայաստանում, մասնավորապես Լոռի-Փամբակում, նման դպրոցներ կազմակերպվեցին 1924 թվականից սկսած։

Գյուղական վայրերում և բանվորական կազմակերպություններում ստեղծված քաղգրագիտության դպրոցներում ուսումնասիրում էին կուսակցության պատմությունը, ծրագիրն ու կանոնադրությունը, Սովետական Միության սահմանադրությունը։ 1924 թ. մարտին Ստեփանավանի շրջկոմի քարտուղար Անուշավան Թումանյանը հաղորդում է գավկոմ, որ շրջանում «Կուսակցական կյանքը... բարձրացել է շնորհիվ քաղխմբակներում տարվող աշխատանքների»[9]։ 1925/26 ուսումնական տարում Ղարաքիլիսայի և Լոռու գավառներում կոմունիստների 50 տոկոսը ընդգրկվում է քաղուսուցման սիստեմում[10]։

Քաղուսուցման ցանցը ընդլայնելուն զուգահեռ, գավկոմները հոգ էին տանում պրոպագանդիստական կադրերի պատրաստման ուղղությամբ։

Պրոպագանդիստական կադրեր, կուսակցական և սովետական աշխատողներ պատրաստելու և վերապատրաստելու նպատակով կազմակերպվում են կուսակցական դպրոցներ։ Դեռևս 1921 թ. հունիսին կուսակցական դպրոց է կազմակերպվում Ղարաքիլիսայում[11], իսկ 1921 թ. վերջում՝ Լոռիում[12]։ Հետագայում նման դպրոցներ են հիմնադրվում նաև Ալավերդում և Ստեփանավանում։

Պրոպագանդիստների պակասը լրացնելու նպատակով, գավկոմը այդ աշխատանքի մեջ է ներգրավում հին կոմունիստների, գավկոմի և կուսակցական կազմակերպությունների ղեկավար աշխատողների։ Այսպես, 1925 թ. Լոռի-Փամբակում պրոպագանդիստական աշխատանք էին կատարում գավկոմի քարտուղար Գ. Քալաշյանը, ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ Դ. Սահակյանը, գավգործկոմի նախագահ Վ. Մամիկոնյանը, նախագահի տեղակալ Ե. Հովսեփյանը, Հ. Ղազարյանը և ուրիշներ[13]։

Այնուհանդերձ, կուսակցական ուսուցման բնագավառում գոյություն ունեին լուրջ թերություններ. ունկնդիրների հանրակրթական մակարդակը տարբեր էր, թույլ էր նրանց մի մասի ինքնուրույն աշխատանքը, զգացվում էր որակյալ պրոպագանդիստների և ուսումնական ձեռնարկների պակաս, պարապմունքները, որոշ առումով, կտրված էին սոցիալիստական շինարարության պրակտիկայից։ Ջնայած դրան, գավկոմի ջանքերի շնորհիվ, ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին կոմունիստների տեսական և կուլտուրական մակարդակը նշանակալիորեն աճեց։

ՌԿ(բ)Կ X համագումարը, որոշելով կուսակցական շինարարության հերթական հարցերը, խնդիր դրեց՝ ամենուրեք ծավալել բանվորական ներկուսակցական դեմոկրատիա, այն հաշվով, որ ապահովվի կոմունիստների ակտիվ

9 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 13, ց. 1, գ. 67, թ. 9։

10 Նույն տեղում, ֆ. 2, ց. 2, գ. 427ա, թ. 14։

11 Նույն տեղում, ֆ. 2, ց. 2, գ. 9, թթ. 3, 36։ Տե՛ս նաև, «Խորհրդային Հայաստան», № 112, 28 հունիսի, 1921։

12 «Խորհրդային Հայաստան», № 19, 25 հունվարի, 1922։

13 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 195, թ. 131։

մասնակցությունը կուսակցական կյանքին, նրա առջև ծառացած խնդիրների քննարկմանը և լուծմանը։ Համագումարը նշեց, որ դրա համար անհրաժեշտ է կոմունիստների ընդհանուր և բջիջների ժողովներում սիստեմատիկորեն քննարկել համակուսակցական, ընդհանուր քաղաքական և տեղական կյանքի բոլոր կարևորագույն հարցերը, պարբերաբար հրավիրել կուսակցական դոնբաց ժողովներ, բարելավել կուսակցական օրգանների հաշվետվության գործը։

Ելնելով համագումարի այս ցուցումներից, Լոռի-Փամբակի գավկոմը 1921—1925 թթ. հսկայական գործ կատարեց ներկուսակցական դեմոկրատիան լավալելու ուղղությամբ։

Կոմունիստների դաստիարակության, նրանց ակտիվության բարձրացման գործում մեծ էր կուսակցական ժողովների դերը։

Կոմբջիջները պարբերաբար, ամիսը 3—4 անգամ, հրավիրում էին ժողովներ, շատ բջիջներ ժողովներ էին գումարում ամեն շաբաթ։ 1924 թ. հունիսի 1-ի տվյալներով, Լոռի-Փամբակում կար 74 բջիջ, կուսակցության 364 անդամով և 493 թեկնածուներով[14]։

Բազմաղան ու բաղմաթիվ էին քննարկվող հարցերը։ Դա կարելի է ցույց տալ գավառի ամենահնագույն ու խոշոր բջիջներից մեկի՝ Հաղբատ գյուղի բջիջի օրինակով։ Այդ բջիջը, որը հիմնադրվել էր 1903 թ. բոլշևիկյան առաջին կազմակերպություններից մեկն էր Հայաստանում։ 1923 թ. հունիսին նշվեց բջիջի 20-ամյակը։ 1924 թ. կազմակերպության անդամ-թեկնածուների թիվը հասնում էր 42-ի[15]։

Արխիվում պահպանված նյութերը վկայում են, որ 1924 թ. 9 ամսում Հաղբատի բջիջը ունեցել է 22 ժողով։ Քննարկվել է գյուղի քաղաքական, տնտեսական, կուլտուրական կյանքին, կուսակցական աշխատանքի տարբեր կողմերին վերաբերող 76 հարց։

Ժողովները, իբրև կանոն, անցնում էին կոմունիստների ակտիվության պայմաններում, գործարար մթնոլորտում։ Ժողովները բարձրացնում էին կոմունիստների պատասխանատվությունը գյուղի, ձեռնարկության, գավառի առջև գրված խնդիրների լուծման նկատմամբ։

Կոմունիստների դոնբաց ժողովներին մասնակցում էին մեծ թվով անկուսակցականներ։ 1924 թ. հինգ ամսվա ընթացքում միայն Ստեփանավանի տեղամասում բջիջների դոնբաց ժողովներին մասնակցել է 6090 անկուսակցական, այսինքն բոլոր անկուսակցականների 25 տոկոսը[16]։ 1924 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գավառի կազմակերպություններում տեղի ունեցած կուսակցական դոնբաց ժողովներին մասնակցել է 5237 անկուսակցական[17]։

Վերականգնման տարիներին բարելավվեց կուսակցական օրգանների հաշվետվության գործը։ Գավառային կուսակցական կոնֆերանսներում, իբրև կանոն, լսվում էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը։ Լոռի-Փամբակի կուսակցական կոնֆերանսներում Կենտկոմի կողմից հանդես են եկել Հ. Լազյանը, Ս. Խանոյանը, Ա. Շահսուվարյանը, Ա. Կարինյանը, Հ. Գյուլիքևխյանը, Ա. Խանջյանը և կուսակցական ու պետական այլ ականավոր գործիչներ։ Գավ-

14 Նույն տեղում, ֆ. 1, ց. 4, գ. 196, թ. 14։
15 Նույն տեղում, ֆ. 2, ց. 2, գ. 251, թ. 1։
16 Նույն տեղում, գ. 526, թ. 15—16։
17 Նույն տեղում, ֆ. 2, ց. 4, գ. 161, թ. 62։

կոմի և շրջկոմների քարտուղարները, պատասխանատու աշխատողները, իրենց հերթին, հաշվետվություններով հանդես էին գալիս բջիջների ժողովներում։ Այդ միջոցառումները խթանում էին կոլեկտիվ ղեկավարման սկզբունքի արմատավորմանը, ամրապնդում կուսակցական կոմիտեների և կոմունիստների կապը, նպաստում քննադատության և ինքնաքննադատության ծավալմանը։

Կուսակցական աշխատանքի աշխուժացման, բջիջների ղեկավարումը բարելավելու և ավելի կենդանի դարձնելու առումով մեծ նշանակություն ունեին կուսակցական ակտիվի նիստերը և գավկոմի պլենումները։ Պլենումները, սովորաբար, ընդլայնված էին։ Պլենումի անդամներից բացի նրանց աշխատանքին մասնակցում էին բջիջների քարտուղարները, կուսակցական ակտիվը։ Պլենումները տեղի էին ունենում կանոնավոր կերպով, տարեկան 3—4 անգամ։ Այստեղ հաշվետվություններով հանդես էին գալիս շրջկոմների և բջիջների քարտուղարներ, լուծվում էին գավառի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքին վերաբերող շատ հարցեր։ 1925 թ. Լոռի-Փամբակի գավկոմը ունեցել է 4 ընդլայնված պլենում[18]։ Նրանցում լսվել են այնպիսի հարցեր, որոնք կենսական նշանակություն ունեին գավառի տնտեսության վերականգնման համար։ Այսպես, օրինակ, պլենումներում քննարկվել են կոոպերացիայի վիճակը և հեռանկարները գավառում, հողաշինարարության ընթացքը, Համկ(բ)Կ XIV կոնֆերանսի արդյունքները, ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքը և այլ հարցեր։ Գավկոմի նախագահությունը մեկ տարում ունեցել է 41 նիստ, որտեղ քննարկվել է ավելի քան 507 հարց։

Կազմակերպության աշխատանքներում մեծ տեղ էին գրավում կուսակցական գավառային կոնֆերանսները։ Կոնֆերանսների նախօրյակին տեղի էին ունենում բջիջների և կոմունիստների ընդհանուր ժողովներ, շրջանային կուսակցական կոնֆերանսներ, ուր հանգամանորեն քննարկվում էին կուսակցական աշխատանքի բազմազան հարցեր, ընտրվում գավառային կոնֆերանսի պատգամավորներ։ Գավկոմը մամուլի միջոցով կամ շրջաբերականով կուսակցական կազմակերպություններին տեղյակ էր պահում ոչ միայն կոնֆերանսի հրավիրման օրվա, այլև օրակարգի մասին։ Կոմունիստները, այդպիսով, նախապես իմանում էին կոնֆերանսում քննարկվելիք հարցերը։

1923 թ. մարտին կայացան Ղարաքիլիսայի[20] և Լոռու գավառային հերթական չորրորդ կուսակցական կոնֆերանսները։ Լոռու կոնֆերանսում հաշվետվությամբ հանդես եկավ գավկոմի քարտուղար Կարապետ Կարապետյանը։ Կոնֆերանսի աշխատանքին մասնակցում էր 66 պատգամավոր։ Հաշվետվության մեջ հանգամանորեն խոսվեց, թե կուսակցական կազմակերպությունը ինչ է արել նախորդ կոնֆերանսի առաջադրած խնդիրները կենսագործելու ուղղությամբ։

Կոնֆերանսը արձանագրեց, որ զգալիորեն աշխուժացել է կուսակցական աշխատանքը, ուժեղացել է կապը շրջկոմների և բջիջների հետ, որ գավկոմն այժմ չի սահմանափակվում միայն տեղերը շրջաբերականներ ուղարկելով։ Գավկոմի անդամները, կուսակցական ակտիվիստները հաճախակի լինում են տեղերում, օգնում բարելավելու կուսակցական-քաղաքական աշխատանքը։

18 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, ց. 2, գ. 270, թթ. 1—32։
19 «Խորհրդային Հայաստան», № 246, 24 հոկտեմբերի, 1925։
20 Կոնֆերանսի նյութերը չեն պահպանվել։

ղեկավարելու աշխատավորների պայքարը ժողովրդական անտեսության վերականգնման համար։

Կոնֆերանսը դավկոմի գործունեությունը համարելով բավարար, միաժամանակ, առաջադրեց հետևյալ խնդիրները. կուսակցության մեջ ընդունել միայն պրոլետարական դիտակից խավերից։ Բարձրացնել կոմբջիջների քարտուղարների որակը, մինչև գավառային հաջորդ կոնֆերանսը վերացնել կոմունիստների քաղաքական անդրագիտությունը։ Բարելավել ազգային փոքրամասնությունների շրջանում տարվող աշխատանքը։ Նրանց համար ձեռք բերել ազգային լեզուներով գրականություն, հատկապես ադրբեջաներեն, որի կարիքը զգալի էր գավառում[21]։

Կոմերիտական կազմակերպությունների գործունեության մասին կոնֆերանսում հաշվետվությամբ հանդես եկավ ՀԿԵՄ գավկոմի քարտուղար Ս. Գրիգորյանը։ Այդ ժամանակ Լոռու գավառում կար 60 կոմերիտական բջիջ 669 անդամով[22]։ Զեկուցողը և պատգամավորները պատմեցին կոմերիտականների անձնվեր աշխատանքի մասին։ Նշվեց, որ նրանք կազմակերպում են երիտասարդական ժողովներ, կարդում դասախոսություններ ու զեկուցումներ, հիմնադրում ակումբներ, գրադարաններ, խրճիթ-ընթերցարաններ, կազմակերպում դրքերի քննարկումներ, համերգներ ու ներկայացումներ։ Կոմերիտականները ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում կուսակցության կողմից կազմակերպվող քաղաքական ու տնտեսական խոշոր միջոցառումներին։ Հավանություն տալով կոմերիտական կազմակերպությունների աշխատանքին, կոնֆերանսը որոշեց այսուհետև ևս «լուրջ ուշադրություն դարձնել նոր. սերնդի կոմունիստական դաստիարակությանը»[23]։

IV կոնֆերանսը հատուկ ուշադրություն նվիրեց նաև գավառի գյուղատնտեսության վերականգնման հարցերին։

*

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին կուսակցությունը պայքարում էր տրոցկիզմի դեմ։ Օգտվելով տնտեսական դժվարություններից և այն բանից, որ Լենինը ծանր հիվանդ էր, Տրոցկին և նրա համախոհները նորից պայքար սկսեցին կուսակցության, նրա Կենտկոմի դեմ։ 1923 թ. հոկտեմբերի սկզբին Տրոցկին Կենտկոմ ուղարկեց մի նամակ, որում դրպարտում էր Կենտկոմի աշխատանքը։ Տրոցկու նամակից անմիջապես հետո լույս աշխարհ եկավ 46-ի հայտարարությունը, որ ստորագրել էին տրոցկիստները, «դեցիստների», «ձախ կոմունիստների» և «բանվորական օպոզիցիայի» մնացորդները։ Հայտարարության հեղինակները դրսլարտչորեն պնդում էին, թե իբր կուսակցական ապարատը փոխարինել է կուսակցությանը։ Նրանք պահանջում էին ֆրակցիաների ու խմբավորումների ազատություն։ Կենտկոմի և ԿՎՀ միացյալ պլենումը, 10 խոշորագույն կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ, 1923 թ. հոկտեմբերին զատապարտեց Տրոցկու և 46-ի ելույթը, որպես քաղաքական տեսակետից խորապես սխալ, որն ընդունել

21 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, ց. 2, ղ. 83, թ. 3։
22 Տե՛ս նույն տեղում։
23 Նույն տեղում։

է «ֆրակցիոն ելույթի բնույթ, սպառնում է կուսակցության միասնությանը և ստեղծում է կուսակցության ճգնաժամ»[24]։

Պլենումի որոշումը ներգործություն չունեցավ Տրոցկու վրա։ Նա հանդես եկավ «նոր կուրս» զրույցով։ Տրոցկիստները նորից կուսակցությանը պարտադրեցին դիսկուսիա։ Ամբողջ երկրով մեկ, կուսակցական կազմակերպություններում, սկսվեց դիսկուսիա։

Համակուսակցական դիսկուսիային ակտիվորեն մասնակցեցին նաև Լոռի-Փամբակի կուսակցական կազմակերպությունները։ Դիսկուսիոն ժողովները տեղի ունեցան 1923 թ. դեկտեմբեր և 1924 թ. հունվար-փետրվար ամիսներին.

Ղարաքիլիսայի սկզբնական կուսակցական կազմակերպության դիսկուսիոն ժողովը տևեց 4 օր։ Ժողովը լսեց ընդհանուր զեկուցում ՌԿ(բ)Կ խնդիրների մասին՝ կապված ներկուսակցական դրության, կուսակցական դեմոկրատիայի հետագա ծավալման և տնտեսական շինարարության հրատապ հարցերի հետ։ Զեկուցման քննարկումն անցավ գործարար մթնոլորտում, կոմունիստների ակտիվության պայմաններում։ Ելույթ ունեցողները, թվով 20 մարդ, լիովին հավանություն տվին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի և ԿՎՀ բանաձևին։ «Կուսակցության միասնությունը,— ասված է ժողովի բանաձևում,— պրոլետարիատի հաղթանակի անխախտ երաշխիքն է, կազմակերպությունը արտահայտվում է ամեն մի ֆրակցիայի և խմբավորումների դեմ»[25]։

Ներկուսակցական և տնտեսական քաղաքականությանը վերաբերող հարցերը դիսկուսիոն կերպով քննարկվեցին նաև Ալավերդում, Ստեփանավանի շրջանի կոմունիստների ընդհանուր ժողովում, Դսեղի ու Սանահինի երկաթուղային շրջանների կուսակցական և կոմերիտական բջիջների քարտուղարների խորհրդակցությունում, Հաղբատ գյուղի բջիջի ժողովում[26] և այլ կազմակերպություններում։ Ամենուրեք կոմունիստները դատապարտում են Տրոցկու և նրա համախոհների ֆրակցիոն գործունեությունը, միահամուռ հավանություն տալիս Կենտկոմի որոշումներին։ Բնորոշն այն է, որ դիսկուսիայի ընթացքում կուսակցական կազմակերպությունները, կոմունիստները ոչ միայն դատապարտում էին տրոցկիզմը, լիովին պաշտպանում Կենտկոմի գիծը, այլև կոնկրետ միջոցառումներ էին նշում ներկուսակցական դեմոկրատիան ընդլայնելու, այդ բնագավառում թույլ տրված սխալները, վրիպումները վերացնելու համար։ Դիսկուսիայի ընթացքում Լոռի-Փամբակի գավառի կազմակերպությունը կանգնած էր կուսակցության միասնության լենինյան դիրքերում։ Գավառի կոմունիստներից ոչ մեկը չկանգնեց օպոզիցիայի տեսակետի վրա, չպաշտպանեց տրոցկիզմը։

Համակուսակցական դիսկուսիայի արդյունքներն ամփոփեց ՌԿ(բ)Կ XII! կոնֆերանսը (1924 թ. հունվար)։ Կոնֆերանսը տրոցկիստական օպոզիցիան բնութագրեց որպես մանրբուրժուական թեքում։ Կոնֆերանսի արդյունքները լայնորեն քննարկվեցին Լոռի-Փամբակի գավառի կոմունիստների ընդհանուր ժողովներում։[27] Կոմունիստները հավանություն տվեցին կոնֆերանսի որոշումներին, դատապարտեցին տրոցկիզմը։ Գավառի կուսակցական կազմակերպու-

24 «ՍՄԿՊ-ն բանաձևերում...», առաջին մաս, էջ 982։

25 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 298, թ. 22։

26 Նույն տեղում, ֆ. 2, ց. 2, գ. 155, թ. 1, գ. 178, թ. 6, գ. 204, թ. 6, ֆ. 1, ց. 3, գ. 205, թ. 2։

27 Տե՛ս նույն տեղում, ֆ. 2, ց. 2, գ. 124, թ. 4։

թյունները լենինյան գիծը պաշտպանեցին նաև 1924 թ. աշնանը, երբ տրոցկիստները կուսակցության վզին փաթաթեցին նոր դիսկուսիա։ ՀԿ(բ)Կ Լոռի-Փամբակի գավառային կազմակերպությունը, ամբողջությամբ վերցրած, կանգնում է ճիշտ գծի վրա, պաշտպանում կուսակցության լենինյան միասնությունը և մերժում է ֆրակցիոն ու օպոզիցիոն խմբավորումների տեսակետները։

1924 թ. տեղի ունեցան Լոռի-Փամբակի գավառային կուսակցական հինգերորդ և վեցերորդ կոնֆերանսները։

Ե կոնֆերանսի նյութերը չեն պահպանվել։ Սակայն, հայտնի է, որ կոնֆերանսը տեղի է ունեցել 1924 թ. մարտի 15-ից 18-ը։ Կոնֆերանսը քննարկել է տնտեսական և կուսակցական շինարարությանը վերաբերող հարցեր[28]։

1924 թ. հոկտեմբերի 21—24-ը դումարվում է Լոռի-Փամբակի գավառային կազմակերպության VI կոնֆերանսը Ղարաքիլիսայում։ Կոնֆերանսը ամփոփում է կուսակցական-կազմակերպական, քաղաքական-մասսայական աշխատանքի արդյունքները, ժողովրդական տնտեսության վերականգնման բնագավառում գավառի աշխատավորների ձեռք բերած նվաճումները և նշում կազմակերպության հետագա անելիքները։ Կոնֆերանսին մասնակցում էր 75 պատգամավոր։ Գավառի կուսակցական կազմակերպությունն այդ ժամանակ իր շարքերում ուներ 341 անդամ և 481 թեկնածու։ Բջիջների քանակը հասնում էր 74-ի։

Կոնֆերանսում հաշվետու զեկուցումով հանդես է գալիս գավկոմի քարտուղար Ա. Բաբլումյանը[29]։ Հաշվետվության մեջ հատուկ տեղ էր հատկացված գավառի գյուղատնտեսության և արդյունաբերության վերականգնման առաջին հաջողություններին։

Կոնֆերանսը խնդիր է դնում աշխուժացնել գյուղական կուսակցական կազմակերպությունների աշխատանքը։

Գավառի գյուղերում այդ ժամանակ լայն տարածում էր ստացել կոոպերացիան, որում, մինչև կոնֆերանսը, ընդգրկված էին գավառի գյուղացիական տնտեսությունների 30 տոկոսից ավելին[30]։ Արձանագրելով կոոպերացիայի բավարար աշխատանքը գավառում, կոնֆերանսը անհրաժեշտ է համարում առանձնակի ուշադրություն դարձնել և ընդլայնել կոոպերատիվ ցանցը՝ ի հաշիվ չքավոր և միջակ գյուղացիության, ուժեղացնել կոմունիստական աղդեցությունը գյուղատնտեսական կոոպերատիվներում։ Որոշվում է «մինչև հաջորդ կոնֆերանսը ազգարնակչության կոոպերացումը գավառում հասցնել 50 տոկոսի»[31]։ Կոնֆերանսը գավկոմի գործունեությունը գնահատում է բավարար[32], ՀԿ(բ)Կ Լոռի-Փամբակի գավառային կոմիտեի պլենումը գավկոմի առաջին քարտուղար է ընտրում Գուրգեն Քալաշյանին։

Խոսելով 1921—1925 թթ. գավառում կուսակցական-կազմակերպական աշխատանքի մասին, պետք է նշել, որ վերականգման ժամանակաշրջանի առաջին տարիներին կուսակցական կազմակերպությունները, գավառային կոմիտեն գործել են չափազանց դժվարին պայմաններում։ Զգացվում էր կուսակցական և

---

28 Նույն տեղում, ֆ. 1, ց. 4, գ. 161, թ. 4։

29 Հաշվետու զեկուցման ամբողջական տեքստը չի պահպանվել։ Արխիվում կան միայն զեկուցման համառոտ գրառումները։

30) Մվի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 191, թ. 2։

31 Նույն տեղում, թ. 10։

32 Նույն տեղում, թ. 7։

սովետական փորձված աշխատողների պակաս։ Գավկոմը, երբեմն հնարավորություն չէր ունենում համալրել բաժինները, իսկ դա բացասաբար էր անդրադառնում աշխատանքի վրա։ Գավկոմը բազմիցս դիմել է Կենտկոմ համապատասխան կադրեր ուղարկելու խնդրանքով։ 1921 թ. նոյեմբերին Ալավերդու շրջկոմի քարտուղարը գրում էր, որ շրջանի ադրբեջանական և հունական գյուղերում աշխատանք չի տարվում, քանի որ չկա ոչ կուսկազմակերպիչ, ոչ էլ կին կազմակերպիչ[33]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը օգնում էր տեղերին, ուղարկում համապատասխան կադրեր։ 1921 թ. հունիսին Ղարաքիլիսայի և Լոռու գավառային կոմիտեները ամրապնդելու նպատակով Կենտկոմը այնտեղ է գործուղում 7 պատասխանատու աշխատողների։ Սակայն, կադրերի պակասության պայմաններում առկա էր նաև կադրերի հոսունության փաստը։ ՀԿ(բ)Կ II համագումարում (1923 թ. մարտ) նշվում է, որ 1921—1922 թթ. ընթացքում Ղարաքիլիսայի գավառում փոխվել է գավկոմի 15 քարտուղար։ 1921 թ. մարտից մինչև սեպտեմբեր ամիսները Լոռիում վոխվել է գավկոմի հինգ քարտուղար։ Կադրերի հաճախակի փոփոխությունը չէր կարող բացասաբար չանդրադառնալ կուսակցական աշխատանքների վրա։

Կուսակցական կազմակերպական, քաղաքական մասսայական աշխատանքներում՝ մեծ էր պարբերական մամուլի դերը։ 1921 թ. մայիսին լույս է տեսնում Լոռու գավկոմի և գավգործկոմի օրգան «Կարմիր Լոռին», իսկ 1922 թ. կարճ ժամանակով՝ Ղարաքիլիսայի գավկոմի օրգան՝ «Դեպի լույս» թերթերը։ Չնայած այդ թերթերի կյանքը կարճ եղավ, այնուամենայնիվ անժխտելի է նրանց մատուցած ծառայությունները գավառի աշխատավորության կոմունիստական դաստիարակության, սովետական ու կուսակցական շինարարության գործում սովետական իշխանության առաջին տարիներին։

Լոռի-Փամբակի կուսակցական կազմակերպությունը 1921—1925 թթ. ընթացքում աճում է քանակապես, բարելավվում է նրա սոցիալական կազմը, կոփվում է դաղափարապես և ամրապնդվում կազմակերպչորեն։ 1925 թ. վերջին գավառի կոմունիստների թիվը հասնում է 1086-ի, որից 524 անդամ, 562 թեկնածու[35], որը կազմում էր հանրապետության կոմունիստների ընդհանուր թվի 15,6 տոկոսը, այսինքն՝ երկրորդը Երևանի գավառից հետո։

Կուսակցական աշխատանքը ինքնանպատակ չէր, այն վերջին հաշվով ուղղված էր մեկ նպատակի՝ մոբիլիզացնել գավառի աշխատավորության ուժերը ժողովրդական տնտեսության վերականգնման համար։ Եվ պետք է նշել, որ գավառի աշխատավորները 1921—25 թթ. ընթացքում հասան որոշակի հաջողությունների։ Արդյունքները ամփոփվեցին Լոռի-Փամբակի գավառային կուսակցական կազմակերպության VII կոնֆերանսում (1925 թ. հոկտեմբեր)։

Բերենք մի քանի ցուցանիշներ։ 1925 թվականին Լոռի-Փամբակի գավառում մշակվում է 33215 գեսյատին վարելահող[36], կամ նախապատերազմյան մակարդակի 103,51 տոկոսը[37]։ Անասունների գլխաքանակը 1926 թվականին հասնում է նախապատերազմյան 85,7 տոկոսին[38]։

33 Մվի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, ց. 2, գ. 53, թ. 5։
34 Նույն տեղում, դ. 51, թ. 5։
35 Նույն տեղում, ֆ. 1, ց. 2, գ. 2, թ. 25։
36 «Խորհրդային Հայաստան։ Հինգ տարի, 1921—1925 թթ.», էջ 435։
37 «Փամբակ-Լոռու գավառի տեղեկատու», էջ 29։
38 Նույն տեղում, էջ 30։

Ճիշտ է, 1921—1925 թթ. գավառի պղնձարդյունաբերության վերականգնումը չավարտվեց, բայց կայուն հիմք դրվեց հետագայում արդյունաբերության այդ ճյուղը ավելի լայն մասշտաբներով վերականգնելու և վերակառուցելու համար։ Վերականգնման տարիներին շահագործման հանձնվեցին կամ հիմնադրվեցին արդյունաբերական մի շարք նոր ձեռնարկություններ։ Հետագա տարիներին գավառը նոր քայլ կատարեց ժողովրդական տնտեսության զարգացման ուղղությամբ և դարձավ Սովետական Հայաստանի արդյունաբերական խոշոր շրջաններից մեկը։

## ПАРТИЙНОЕ СТРОИТЕЛЬСТВО В ЛОРИ-ПАМБАКСКОМ УЕЗДЕ (1921—1925 гг.)

Г. М. АЙВАЗЯН

**Резюме**

В 1923 году с объединением Лорийского и Караклисского уездов образовался Лорн-Памбакский уезд. В статье излагается история образования Лорн-Памбакской уездной партийной организации, освещается работа в области партийного строительства.

На основе архивных данных освещается деятельность уездной партийной организации в 1921—1925 гг., показывается та громадная работа, которая проделана для улучшения социального состава организации и укрепления ее рядов, а также идеологической закалки коммунистов.